

Արձանագրություն

**Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետ
Ս.Սահակյանի մոտ**

**25.11.2014թ. տեղի ունեցած ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր
երիտասարդական խորհրդի նիստի**

Մասնակցում էին՝

խորհրդի նախագահ, մարզպետ Ս.Սահակյան,
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության
ներկայացուցիչներ,
ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի
անդամներ:

Լսեցին՝

1. <<ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության
հայեցակարգը>> հաստատելու մասին:

Որոշեցին՝

1. Առաջարկությունները կապված <<ՀՀ երիտասարդական պետական
քաղաքականության հայեցակարգի>> հետ ներկայացնել ՀՀ սպորտի և
երիտասարդության նախարարություն:

Լսեցին՝

2. Մինչև 2015թ.թ. ապրիլի 7 <<Ընտանիքի տարի>>, <<Ոսկե
հարսանիք>>, <<Անվանի գերդաստան>> միջոցառումների կազմակերպման
մասին:

Որոշեցին՝

2. Մինչև 2015 թ. ապրիլի 7-ը համայնքներում կազմակերպել <<Ընտանիքի
տարի>>, <<Ոսկե հարսանիք>>, <<Անվանի գերդաստան>> միջոցառումներ:

Լսեցին՝

3. Միջազգային կառույցների հետ համագործակցության հարցը:

Որոշեցին՝

3. Համագործակցել միջազգային կառույցների հետ:

Լսեցին՝

4. <<Երիտասարդական մայրաքաղաք>> մրցույթին Աշտարակ, Թալին և Ապարան քաղաքների մասնակցության մասին:

Որոշեցին՝

4. Աշտարակ, Թալին և Ապարան քաղաքները դիմեն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն մասնակցելու <<Երիտասարդական մայրաքաղաք>> մրցույթին:

Լսեցին՝

5. Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում քարտուղարի ընտրության և անդամի փոփոխության մասին:

Որոշեցին՝

5. Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում քարտուղար ընտրել խորհրդի անդամ՝ Ռուանդ Սպարտակի Հակոբյանին:

Խորհրդի կազմում կատարել փոփոխություն Աշտարակի համայնքից Տարև Հարությունյանի փոխարեն խորհրդի կազմում ընդգրկել Անահիտ Տոնոյանին:

ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր
Երիտասարդական խորհրդի նախագահ՝

Մ Սահակյան